# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**9 սեպտեմբերի 2011 թվականի N 13**

| | |
|---|---|
| ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ | Ս. Տեր-Սիմոնյան |
| ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝ Հանձնաժողովի անդամներ՝ | Ա. Բախշյան, Ֆ. Բերիկյան, Ռ. Տիգրանյան, Ռ. Մակարյան, Մ. Մկրտչյան, Ա. Պողոսյան, Ա. Օսիկյան, Ա. Եսայան, Կ. Բեգլարյան, Ա. Զոհրաբյան, Ա. Վարդանյան, Ա. Ղազարյան, Մ. Մարտիրոսյան, Բ. Սարգսյան, Ա. Բեջանյան, Ռ. Լևոնյան, Ա. Եղիազարյան |

<u>Հրավիրված էին՝</u>

| | |
|---|---|
| Ա. Պողոսյան | «Հայաստան» համահայկական հիմնադրամ |
| Ա. Արաբյան<br>Ա. Գամաղելյան | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին |
| Գ. Սահակյան | «Հայրենիք միություն» մարդասիրական կազմակերպություն |
| Ա. Հովհաննիսյան<br>Ն. Տումանովա<br>Հ. Հովիվյան | «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Գ. Պողոսյան<br>Ա. Գրիգորյան | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ |
| Կ. Պողոսյան | Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչություն |

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք գյուղի համար նոր միջնակարգ դպրոցի կառուցում» ծրագրի մասին:

(Ա. Պողոսյան, Ա. Բախշյան, Ֆ. Բերիկյան, Մ. Մկրտչյան, Ս. Տեր-Սիմոնյան)

---

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:
2. Առաջարկել կազմակերպությանը Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք գյուղի գործող դպրոցի վիճակի և նոր կառուցվող դպրոցի նպատակահարմարության վերաբերյալ տեղեկատվություն:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի միջնակարգ հանրակրթական դպրոցների համակարգչային դասարանների կահավորում» ծրագրի մասին:

(Ա. Պողոսյան, Ա. Բախշյան, Ֆ. Բերիկյան, Կ. Բեգլարյան, Ս. Տեր-Սիմոնյան)

---

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:



2. Առաջարկել կազմակերպությանը Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել համակարգչային կահույքի բաշխման ցանկը ըստ դպրոցների՝ որպես ներկայացված ծրագրի հավելված:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Վանաձորի Հայորդաց տան շքամուտքերի կառուցում» ծրագրի մասին:

(Ա. (Տեր-Հովել) Գամաղելյան, Ա. Ղազարյան, Ս. Տեր-Սիմոնյան)

---

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

4. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու մատուռ խորանի կառուցում» ծրագրի մասին:

(Ա. (Տեր-Հովել) Գամաղելյան, Ս. Տեր-Սիմոնյան)

---

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Հանդիսությունների հարթակի կառուցում» ծրագրի մասին:

(Ա. (Տեր-Հովել) Գամաղելյան, Ս. Տեր-Սիմոնյան)

---

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

6. «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից Վանաձոր քաղաքում իրականացվող «Օրրան-Կրիկորյան» ցերեկային խնամքի կենտրոնի կառուցում» ծրագրի մասին:

(Ա. Հովհաննիսյան, Ֆ. Բերիկյան, Ս. Տեր-Սիմոնյան)

---

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:
2. Առաջարկել կազմակերպությանը խմբագրել ներկայացված ծրագիրը՝ նշելով, թե սոցիալապես անապահով երեխաների և միայնակ ծերերի ցերեկային խնամքի մասով իրականացվող միջոցառումների դադարումից հետո շենքը ինչպես և ինչ նպատակով է օգտագործվելու:

## 7. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման ծրագրերի մասին

(Ա. Բարխուդարյան)

7.1 Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

---

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:
2. Խմբագրել որոշման նախագիծը՝ լրացնելով կետ, որով կնախատեսվի, որ բեռը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության միջոցով կբաշխվի Լեռնայի Ղարաբաղի Հանրապետության հիվանդանոցներին և բուժկետերին:

7.2 Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

---

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

7.3 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 1):

---

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

7.4 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 2):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

7.5 «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

7.6 «Հայ-ֆրանսիական միջազգային առողջապահական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված շտապ օգնության ավտոմեքենաների ներմուծման ծրագրի մասին:

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

7.7 «Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխություն» բարեգործական կազմակերպության Գյումրու մասնաճյուղի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

7.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի մարտի 2-ի N Մ-153-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

7.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի մարտի 2-ի N Մ-153-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն) (N 1):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

## 8. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին

(Ա. Բարխուդարյան)

8.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-092-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Հայաստան» համահայկական հիմնադրամ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

8.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Մատենադարան» հիմնադրամ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:



8.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-935-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սի. Օ. Էյ. Էֆ.» մանուկների բարեգործական հիմնադրամ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

8.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-057-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

8.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 28-ի N Մ-120-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ) (N 1):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

8.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 3-ի N Մ-411-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Խոսրովի անտառ» պետական արգելոց ՊՈԱԿ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

8.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-549-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

8.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի N Մ-90-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

8.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

8.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի N Մ-642-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագիր) (2):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

8.11 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի N Մ-495-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցություն» հիմնադրամ) (N 5):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

8.12 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 31-ի N Մ-548-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

**9. Այլ հարցեր**

9.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 14-ի N Մ-910-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգելու մասին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

**ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՐՑԵՐ**

1. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինանյութի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Վարդենիս համայնքի խմելու ջրի ջրագծի վերանորոգման համար» ծրագրի մասին:
(Ա. Գրիգորյան, Ա. Բախշյան, Ս. Տեր-Սիմոնյան)

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

2. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Դաշտադեմ համայնքի մանկապարտեզում ջեռուցման համակարգի տեղադրում» ծրագրի մասին:
(Գ. Պողոսյան, Ա. Բախշյան, Ս. Տեր-Սիմոնյան)

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաքավաձոր համայնքում ցերեկային կենտրոնի վերանորոգում» ծրագրի մասին:
(Գ. Պողոսյան, Ս. Տեր-Սիմոնյան)

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:



**4. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման ծրագրերի մասին**
(Ա. Բարխուդարյան):

4.1 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

4.2 ԱՄՆ-ի «Հայաստանի բարեկամներ» («Հայրենիք» միություն) մարդասիրական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:
2. Խմբագրել որոշման նախագիծը՝ լրացնելով կետ, որով կամրագրվի կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով մանրամասն բաշխման ցանկը ներկայացնելու ժամկետը:

4.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 14-ի N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

**5. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին**
(Ա. Բարխուդարյան)

5.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունվարի 21-ի N Մ-001-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Մատենադարան» հիմնադրամ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի N Մ-565-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ) (N 1):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի N Մ-565-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ) (N 2):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

## 6. Այլ հարցեր

6.1 «Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:
2. Որոշումը ստորագրել շահագրգիռ պետական մարմիններից կարծիքները ստանալուց հետո:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-760-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի օգոստոսի 25-ի N 3/3.8-2/83629-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի օգոստոսի 29-ի N ՀՔ/22/7868-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի 29-ի N ԱԱ/3-6/6089-11 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի «Ռոստրոպովիչ-Վիշնևսկայա» հիմնադրամի միջոցներով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված ախտորոշիչ թեստերի (5 տեղ, 64 կգ ընդհանուր քաշով, 733.20 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 320 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռը համապատասխան բուժհաստատություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-761-Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի օգոստոսի 25-ի N 3/3.8-2/83630-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի օգոստոսի 29-ի N ՀՔ/22/7867-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի 29-ի N ԱԱ/3-6/6088-11 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի առողջապահության և սոցիալական ծառայությունների դեպարտամենտի հիվանդությունների վերահսկման ու կանխարգելման կենտրոնի կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Բարձր ախտածին թռչնագրիպի համաճարակի հակազդեցության ազգային ծրագրի շրջանակներում ստացված ախտորոշիչ թեստերի (մեկ տեղ, 34 կգ ընդհանուր քաշով, 10 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 2530 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռը համապատասխան բուժհաստատություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-762-Ա**
**քաղ. Երևան**

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի օգոստոսի 29-ի N 3/3.8-2/83754-11, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2011 թվականի օգոստոսի 26-ի N 1/06/786-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի 29-ի N ԱԱ/3-6/6090-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիայի (FIFA) կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված գրասենյակային պարագաների և մարզագույքի (9 տեղ, 157 կգ ընդհանուր քաշով, 1933 շվեյցարական ֆրանկին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1216.60 շվեյցարական ֆրանկ, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-763-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 2-ի N 3/3.8-2/84023-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 1-ի N ՀՔ/22/7983-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի օգոստոսի 31-ի N ԱԱ/3-6/6152-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի «Հայ-ֆրանսիական առողջապահական շարժում» բարեգործական կազմակերպության կողմից ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով որպես օժանդակություն Գորիսի նորակառույց սրտաբանական կենտրոնի համար «Հայ-ֆրանսիական միջազգային առողջապահական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված երկու «Citroen Jumper» մակնիշի շտապ օգնության ավտոմեքենաների և համալրող սարքավորումների (1996 թվականի արտադրության, նույնականացման համարը՝ VF7233J5215215491, 8000 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ և 1997 թվականի արտադրության, նույնականացման համարը՝ VF7233J5215412776, 8000 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 7525 ԱՄՆ-ի դոլար, «ԱՄ ՄՋՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայ-ֆրանսիական միջազգային առողջապահական ասոցիացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռը համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-764-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N Մ-153-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի օգոստոսի 29-ի N 3/3.8-2/83755-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի 29-ի N ԱԱ/3-6/6091-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված լողավազանի մաքրող սարքը, լվացող և մաքրող միջոցները (2 տեղ, 435 կգ ընդհանուր քաշով, 9464 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի մարտի 2-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-153-Ա որոշմամբ (2009 թվականի հոկտեմբերի 9-ի N Մ-704-Ա, 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-704-Ա, 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-059-Ա և 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-523-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-765-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N Մ-153-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (N 1)

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 2-ի N 3/3.8-2/84051-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 5-ի N ԱԱ/3-6/6263-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված լողավազանի համար նախատեսված մաքրող միջոցները և թախտերը (3 տեղ, 2510 կգ ընդհանուր քաշով, 11600 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2000 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի մարտի 2-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-153-Ա որոշմամբ (2009 թվականի հոկտեմբերի 9-ի N Մ-704-Ա, 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-704-Ա, 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-059-Ա և 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-523-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-766-Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-057-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 2-ի N 3/3.8-1/84059-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 1-ի N ԱԱ/3-4/6205-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Կապեր եկեղեցու և կառավարության հետ» ծրագրի մասին» N Մ-057-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սպորտ սիթի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02590297) 2011 թվականի օգոստոսի 25-ին կնքված՝ N WVA/CC/SSG-11/001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մարզական գույքի մատակարարում՝ 3940833 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-767-Ա**

**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՇԻՆԱՆՅՈՒԹԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱԳԾԻ ՎԵՐԱՆՈՐԳՄԱՆ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 7-ի N 3/3.8-1/84237-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 7-ի N 01/5596-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 5-ի N ԱԱ/3-4/6278-11 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 2-ի N 01/10.1/2615-11 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 1622200 դրամ ընդհանուր արժողությամբ «Շինանյութի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Վարդենիս համայնքի խմելու ջրի ջրագծի վերանորոգման համար» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պահպարեխ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05014705) 2011 թվականի օգոստոսի 3-ին կնքված՝ N WVA/APAR ADP/CMP-11/004 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի մատակարարում՝ 1622200 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:



3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է՝

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական

կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի

Տնօրէն Գրահամ Սթրոնգ

Օգոստոսի 22, 2011թ.

**«Շինանյութի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Վարդենիս համայնքի խմելու ջրի ջրագծի վերանորոգման համար»**

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Աջակցել Արագածոտն մարզի Վարդենիս համայնքի խմելու ջրի ներքին համակարգի վերանորոգմանը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | «Վորլդ Վիժն Թայվան» աջակցող գրասենյակ<br>*Հասցե՝ World Vision Taiwan, 6F, 133, Sec.4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan (R.O.C.)* |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>Հասցե՝ ք. Երևան, Ռ. Մելիքյան 1, ՀՎՀՀ 02528755 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Վարդենիս համայնք:<br>Բնագավառը՝ ջրամատակարարում |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 1.622.200 (մեկ միլիոն վեց հարյուր քսաներկու հազար երկու հարյուր) դրամ: |
| 7 | Բարեգործության ստացողը | Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Վարդենիս համայնք |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Օգոստոսի 10 – Օգոստոսի 31, 2011թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում, սույն թվականի Օգոստոս ամսին Արագածոտն մարզի Վարդենիս համայնք մատակարարվելու է շինանյութ խմելու ջրագծի վերանորոգման համար: Մատակարարվող շինանյութի ընդհանուր արժեքը կազմում է 1.622.200 (մեկ միլիոն վեց հարյուր քսաներկու հազար երկու հարյուր) դրամ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Շինանյութի մատակարարումն իրականացնելու նպատակով մրցութային կարգով ընտրվել և պայմանագիր է կնքվել "Պահպարեխ" ՄՊԸ-ի հետ՝ 1 622 200 դրամ ընդհանուր արժողությամբ: Մատակարար կազմակերպության հետ կնքված պայմանագրի պատճեն և համապատասխան հավելվածները կցվում են: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված նախատեսվող ծախսեր | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական և այլ մարմինների հետ | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Վարդենիս համայնքի համայնքապետարանի հետ համատեղ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի վերահսկողությունը կիրականացվի ծրագրի ֆինանսավորող Վորլդ Վիժն Թայվանի կողմից, ինչպես նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» հայաստանյան մասնաճյուղի Շինարարական Ծրագրերի պատասխանատուի և Տարածքային Զարգացման Համակարգողների կողմից, որոնք իրենց հերթին վերահսկվում են միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից:<br><br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի Հայաստանի Հանրապետության Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Արման Գրիգորյան

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական

կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի

Ապարանի տարածքային զարգացման ծրագրի ղեկավար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-768-Ա**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 7-ի N 3/3.8-1/84239-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 7-ի N 01/5598-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 5-ի N ԱԱ/3-4/6272-11 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 2-ի N 01/10.1/2618-11 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 1194038 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Դաշտադեմ համայնքի մանկապարտեզում ջեռուցման համակարգի տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Իմէքս գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00847479) 2011 թվականի օգոստոսի 18-ին կնքված՝ N WVA/TAL ADP/HT-11/001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման համակարգի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 1194038 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:



3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ Միջազգային Բարեգործական
Կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի
Տնօրեն՝ Գրահամ Սթրոնգ
24-ը օգոստոսի, 2011թ.

«Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Դաշտադեմ համայնքի մանկապարտեզում ջեռուցման համակարգի տեղադրում»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Դաշտադեմ համայնքի մանկապարտեզում տեղադրել ջեռուցման համակարգ այդ համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ակտիվ ուսումնառությանը նպաստելու համար: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Վորլդ Վիժն Կանադայի աջակցող գրասենյակ<br>Հասցե՝ World Vision Canada, 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Canada |
| 4. | Ծրագիրը կատարողը | Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ Միջազգային Բարեգործական Կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղը<br>Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ 02528755, հեռախոս՝+37410749146 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Դաշտադեմ համայնքի մանկապարտեզ:<br>Բնագավառը՝ կրթություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է՝ 1.194.038 (մեկ միլիոն հարյուր իննսունչորս հազար երեսունութ) դրամ: Ֆինանսավորման աղբյուրը՝ Վորլդ Վիժն Կանադայի աջակցող գրասենյակ: Ֆինանսավորումը ստացվել է 2010թ.-ի հոկտեմբեր ամսին: Ծրագրի իրականացման համար հատկացված ֆոնդերը նախատեսվում է ծախսել մինչև 2011թ.-ի Հոկտեմբերի 15-ը: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Դաշտադեմ համայնքի |



| | | |
|---|---|---|
| | | մանկապարտեզը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2011թ.-ի օգոստոսի 18-ից հոկտեմբերի 15-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է ջեռուցման համակարգի մատակարարումն ու տեղադրումն իրականացնել Դաշտադեմ համայնք մինչև 2011թ.-ի հոկտեմբերի 15-ը: Ջեռուցման համակարգի ընդհանուր արժեքը կազմում է՝ 1.194.038 (մեկ միլիոն հարյուր իննսունչորս հազար երեսունութ) դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման համար մրցութային կարգով ընտրվել և պայմանագիր է կնքվել «ԻՄԵՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հետ՝ 1.194.038 դրամ ընդհանուր արժողությամբ: Մատակարար կազմակերպության հետ կնքված պայմանագրի պատճեն և համապատասխան հավելվածները կցվում են: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպությունը համագործակցում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Դաշտադեմ համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի Վերահսկողությունը կիրականացվի ծրագրի ֆինանսավորող Վորլդ Վիժն Կանադայի կողմից ինչպես նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» հայաստանյան մասնաճյուղի համայնքային կազմակերպիչները: Անմիջական վարչական և ծրագրային վերահսկողությունն իրականացվում է Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպության համապատասխան բաժինների, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող Վորլդ Վիժն Կանադայի գրասենյակի կողմից:<br><br>Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպությունն իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից: |

Լիանա Սարգսյան

Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ Միջազգային Բարեգործական
Կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի
Արագածոտն մարզային զարգացման ղեկավար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-769-Ա**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱՔԱՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐԱՆՈՐԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 6-ի N 3/3.8-1/84184-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 7-ի N 01/5595-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 5-ի N ԱԱ/3-4/6276-11 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 2-ի N 01/10.1/2617-11 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 3250758 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաքավաձոր համայնքում ցերեկային կենտրոնի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Խապարտշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05305097) 2011 թվականի օգոստոսի 19-ին կնքված՝ N WVA/TAL ADP/RW-11/001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինվերանորոգման աշխատանքների իրականացում՝ 3250758 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:



3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ Միջազգային Բարեգործական
Կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի
Տնօրեն՝ Գրահամ Սթրոնգ
24-ը օգոստոս, 2011թ.

«Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Կաքավաձոր համայնքում ցերեկային կենտրոնի վերանորոգում»

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Կաքավաձոր համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ուսումնառության և զարգացման գործընթացին՝ վերանորոգելով համայնքի մշակույթի տան մի մասը՝ որպես ցերեկային կենտրոն ծառայելու նպատակով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Վորլդ Վիժն Կանադայի աջակցող գրասենյակ<br>*Հասցե՝ World Vision Canada, 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Canada* |
| 4. | Ծրագիրը կատարողը | Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ Միջազգային Բարեգործական Կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղը<br>*Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ 02528755, հեռախոս՝+37410749146* |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Կաքավաձոր համայնք<br>Բնագավառը՝ Կրթություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է՝ 3.250.758 (երեք միլիոն երկու հարյուր հիսուն հազար յոթ հարյուր հիսունութ) դրամ: Ֆինանսավորման աղբյուրը՝ Վորլդ Վիժն Կանադայի աջակցող գրասենյակ: Ֆինանսավորումը ստացվել է 2010թ.-ի հոկտեմբեր ամսին: Ծրագրի իրականացման համար հատկացված փողերը նախատեսվում է ծախսել մինչև 2011թ.-ի սեպտեմբերի 30-ը: |



| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Կաքավաձոր համայնքը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2011թ.-ի օգոստոսի 19-ից սեպտեմբերի 30-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված վերանորոգման աշխատանքները կիրականացվեն մինչև 2011թ.-ի սեպտեմբերի 30-ը: Վերանորոգման աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է 3.250.758 (երեք միլիոն երկու հարյուր հիսուն հազար յոթ հարյուր հիսունութ) դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Վերանորոգման աշխատանքներն իրականացնելու համար պայմանագիր է կնքվել «Խսպարտշին» ՍՊԸ-ի հետ (պայմանագրի և հավելվածների օրինակները կցվում են): |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպությունը համագործակցում է Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Կաքավաձոր համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության միջոցների նկարագրությունը | Ծրագրի Վերահսկողությունը կիրականացվի ծրագրի ֆինանսավորող Վորլդ Վիժն Կանադայի կողմից ինչպես նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» հայաստանյան մասնաճյուղի համայնքային կազմակերպիչները: Անմիջական վարչական և ծրագրային վերահսկողությունն իրականացվում է Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպության համապատասխան բաժինների, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող Վորլդ Վիժն Կանադայի գրասենյակի կողմից:<br><br>Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպությունն իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից: |

Լիանա Սարգսյան

Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ Միջազգային Բարեգործական
Կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի
Արագածոտն մարզային զարգացման ղեկավար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-770-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի N Մ-001-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 7-ի N 3/3.8-1/84228-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 5-ի N ԱԱ/3-4/6280-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Ազատության 26, ՀՎՀՀ՝ 00040233) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունվարի 21-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2011-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառույցների պահպանում և հետագա զարգացման աջակցություն» ծրագրի մասին» N Մ-001-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Յունիքոմփ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01815551) 2011 թվականի օգոստոսի 23-ին կնքված՝ N ԳԱՏԱՀ 8/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչի հարակից սարքավորումների ձեռքբերում՝ 31000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Յունիքոմփ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01815551) 2011 թվականի օգոստոսի 24-ին կնքված՝ N ԳԱՏԱՀ 9/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում համակարգչային սարքավորումների ձեռքբերում՝ 1000000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-771-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N Մ-565-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (N 1)**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 6-ի N 3/3.8-1/84183-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի -ի N ԱԱ/3-4/6270-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան գրադարանի վերանորոգման, վերակառուցման և պահպանման» ծրագրի մասին» N Մ-565-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ավտոեվրո-գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00847271) 2011 թվականի օգոստոսի 2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հողային աշխատանքների իրականացում՝ 600000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ն. Հ. Միաձուլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03527991) 2011 թվականի օգոստոսի 2-ին կնքված՝ N 01-11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 160 խորանարդ մետր բետոնի մատակարարում՝ 6240000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



3) «Տնա-շին Աշոտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04415105) 2011 թվականի օգոստոսի 2-ին կնքված՝ N 02-11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 546 խորանարդ մետր շինարարական ավազի մատակարարում՝ 1729182 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Մետաղական կառուցվածքների գործարան» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00405482) 2011 թվականի օգոստոսի 5-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղական կառուցվածքների տարրերի պատրաստում՝ 325000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-772-Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N Մ-565-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 6-ի N 3/3.8-1/84172-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 5-ի N ԱԱ/3-4/6277-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու վերանորոգման, վերակառուցման և պահպանման» ծրագրի մասին» N Մ-565-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Տիգարբո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01233674) 2011 թվականի օգոստոսի 24-ին կնքված՝ N 02Տ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 130 խորանարդ մետր բետոնե շաղախի մատակարարում՝ 5265000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մետաղական կառուցվածքների գործարան» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00405482) 2011 թվականի օգոստոսի 26-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղական կառուցվածքների պատրաստում՝ 517000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ -773-Ա**
**(որոշումն ընդունվել է օգոստոսի 26-ի նիստին)**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի N Մ-345-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

**(«Քարավան-88» բարեգործական հասարակական կազմակերպություն)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի օգոստոսի 12-ի N 3.8-2/82996-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի 10-ի N ԱԱ/3-6/5662-11 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 13-ի «Քարավան-88» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ «Քարավան-88» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» N Մ-345-Ա որոշմամբ հաստատված ծրագրում (2011 թվականի հունիսի 17-ի N Մ-489-Ա որոշման խմբագրությամբ) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ի կետում «170000 ԱՄՆ-ի» բառերը կարդալ «275000 ԱՄՆ-ի»:

2) որոշմանը կից ծրագրի 6-րդ կետում «170000 ԱՄՆ-ի» բառերը փոխել «275000 ԱՄՆ-ի» բառերով:

2.Սահմանել, որ Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Քարավան-88» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բեռը (74 տեղ, 2416.8 կգ ընդհանուր քաշով, 92118 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, որից բեռնափոխադրման ծախսերը կազմում են 6463 ԱՄՆ-ի դոլար, Արարատյան Տ/Մ) ներմուծվում է «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 13-ի «Քարավան-88» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման» N Մ-345-Ա որոշմամբ (2011 թվականի հունիսի 17-ի N Մ-489-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում, (բեռի ցանկը կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

# Բեռի բաշխման ցանկ

| Անվանումը | քանակը | արժեքը | ստացող | քանակը ըստ գյուղերի |
|---|---|---|---|---|
| Օգտագործված հագուստ | 40 արկղ | 18217495 | Բերդաշեն<br>Աղվորիկ | 25 արկղ<br>15 արկղ |
| Մանկական հագուստ | 5 արկղ | 1552339 | Բերդաշեն<br>Աղվորիկ | 3 արկղ<br>2 արկղ |
| Մանկական կոշիկներ արհեստական կաշվից | 50 զույգ | 41044 | Բերդաշեն<br>Աղվորիկ | 3 արկղ<br>2 արկղ |
| Մարզասարք | 1 հատ | 463053 | Բերդաշեն | 1 հատ |
| Գրքեր | 9 արկղ | 8938241 | Բերդաշեն<br>Աղվորիկ | 5 արկղ<br>4 արկղ |
| Մեծահասակների խանձարուրներ | 3 արկղ | 2114104 | Բերդաշեն<br>Աղվորիկ | 2 արկղ<br>1արկղ |
| .Փոքր սառնարան Whirlpool (օգտագործած) | 1 հատ | 123802 | Բերդաշեն, | 1 հատ |
| Աթոռներ օգտագործած | 2 արկղ | 1627915 | Բերդաշեն<br>Աղվորիկ | 12 հատ<br>6 հատ |
| Քայլասայլակ պտուտակներով | 1 հատ | 14041 | Աղվորիկ | 1 հատ |
| Համակարգիչ (մանիտոր, պրոցեսոր HP) | 2 հատ | 1528647 | Բերդաշեն<br>Աղվորիկ | 1 հատ<br>1 հատ |
| Ընդամենը | | 34620681 | | |

Տեղերի քանակը 74, քաշը՝ 2,416.8 կգ, 85,655 ԱՄՆ դոլար արժեքով, որի ճանապարհածախսը կազմում է 6463 ԱՄՆ դոլար, ընդամենը 92.118 դոլար: Բաշխումը կատարվելու է արկղերով:

«Քարավան-88»
ԲՀԿ-ի նախագահ Ջ.Ջուլհակյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ - 774 - Ա**
**(որոշումն ընդունվել է օգոստոսի 26-ի նիստին)**
**քաղ. Երևան**

# ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՎԵՏԻՍՅԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի օգոստոսի 16-ի N 3/3.8-1/83027-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի օգոստոսի 12-ի N 5033-11, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2011 թվականի օգոստոսի 12-ի N 01/13.2/3959-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի օգոստոսի 11-ի N 01/07-1/8953-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի 12-ի N ԱԱ/3-4/5735-11 ու Երևանի քաղաքապետին 2011 թվականի օգոստոսի 19-ի N 02/16-29384հ եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 7000000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Ավետիսյան դպրոցի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գիտության և կրթության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

(

Հաստատված է՝
Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի Մասնաճյուղի
Տնօրեն՝ Ռ. Լեռնյանի կողմից
«05» սեպտեմբերի, 2011թվ

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ 2011-2013 թվ. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՎԵՏԻՍՅԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ » ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի հիմնական նպատակն է հանդիսանում դպրոցի կառուցումը , որի արդյունքում անհրաժեշտ պայմաններ կապահովվեն կրթական ծրագրերի իրականացման համար : Շենքը կառուցվելու և հագեցած է լինելու արևմտյան զարգացած երկրներում կիրառվող նորագույն կրթական սարքավորումներով և տեխնոլոգիաներով: Նման պայմանների առկայությունը հնարավորություն կընձեռի այդ դպրոցին էլ ավելի բարձրացնել կրթության որակը՝ ժամանակակից նորամուծություններ բերելով հանրապետության կրթական համակարգում:<br>Այսպիսով դպրոցի կառուցումը կնպաստի հետևյալ նպատակների իրականացմանը.<br>Շենքը կլինի ժամանակակից սարքավորումներով հագեցված նոր լսարաններով, լաբորատորիաներով, գրադարաններով, բաց տարածքներով,մարզական դահլիճով, խաղավայրերով եւայլն:<br>Այն կնպաստի Հայաստանի դպրոցական համակարգում առաջատար կրթական տեխնոլոգիաների ներմուծմանը, Հայաստանի տարածքում նորարարական ճարտարագիտական լուծումների ներմուծմանը, մասնավորապես բնապահպանման, արտանետվող նյութերի ֆիլտրացման համակարգ, հասարակության տարբեր խավերի համար հարմարավետության ապահովում, մասնավորապես հաշմանդամների համար 100 տոկոս մատչելիության ապահովում, արևային էներգիայի օգտագործում և այլն: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Ծրագրի շրջանակներում ակնկալում ենք օգտվել հարկային և մաքսային արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն, ԱՄՆ, Նյու Ջերսի, Փարամուս, 31 Ուեսթ Սենչուրի Ռոուդ, Բարերար՝ Էդվարդ Ավետիսյան: |
| 4 | Ծրագիրը կատարող | Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ<br>ՀՎՀՀ 00032803, հասցե: Նիկոլ Դուման 22 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը , բնագավառը | Ծրագրի իրականացման վայրն է Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մալաթիա - Սեբաստիա համայնք , Բաբաջանյան 42/7 2 հեկտար մակերեսով:<br>Կառուցվելիք շենքի շուրջ նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել շրջակա տարածքը, ստեղծել այստեղ արևմտյան չափանիշներին համապատասխանող հանգստի գոտի, որը մատչելի կլինի դպրոցականների համար, իրականացնել ծառատնկման աշխատանքներ և լուսավորության անցկացում: |

| | | |
|---|---|---|
| | | Ծրագիրը առնչվում է սոցիալական և կրթական բնագավառներին: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է մոտ 7000000/յոթ միլիոն ԱՄՆ դոլար, որը կազմում է մոտ 2555000000 / երկու միլիարդ հինգ հարյուր հիսունհինգ միլիոն ՀՀ դրամ : |
| 7 | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներն են համարվում.<br>• ԱՀԱԸ-ի Ավետիսյան Դպրոցի ներկա և գալիք աշակերտները, աշխատողներն ու դասախոսական անձնակազմը<br><br>*1997 թվականի դեկտեմբերի 05 –ին Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի և Մալաթիա - Սեբաստիա թաղապետարանի միջև կնքվել է համաձայնագիր ըստ որի թաղապետարանը 99 տարի անհատույց օգտագործման է տրամադրել թիվ 277 մանկապարտեզի շենքը և տարածքը ՝ կրթական ծրագրերի իրականացման նպատակով.<br>Այժմ այդ շենքում իրականացվում է նախադպրոցական և միջնակարգ կրթություն:<br>Նախադպրոցական ծրագիրը իր մեջ ներառում է 4 տարիքային խմբեր՝ 3-5 տարեկան, յուրաքանչյուր խմբում 25 երեխա, և առաջնորդվում է ՀՀ ԿԳՆ նախադպրոցական ծրագրերով:<br>Դպրոցական ծրագիրը նույնպես աշխատում է ՀՀ ԿԳՆ կողմից հաստատված ծրագրերով, իսկ հավելյալ ուսումնասիրվող ծրագրերը հաստատվում են լեզվի բարեփոխումների կենտրոնում:<br>Դրոցական ծրագրերին հաճախում են 184 երեխաներ:<br>Նոր դպրոցաշենքի կառուցումը վերոհիշյալ երեխաներին կապահովի բարենպաստ պայմաններ իրենց կրթական ծրագրերը շարունակելու համար: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Շինարարական Ծրագրի տևողությունն է մոտավորապես 28-30 ամիս:<br>Կրթական ծրագրի տևողությունն է 99 տարի:<br>Նախագծային աշխատանքները նախատեսված է սկսել 2011 թ. սեպտեմբերից և Շինարարական աշխատանքները նախատեսված է սկսել 2012 թ. Հունիս ամսից: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Շինարարության ծրագիրը նախատեսվում է իրականացնել հետևյալ փուլերով.<br><br>1-ին փուլ՝, նախագծային և ճարտարապետական աշխատանքներ- 15 ամիս տևողության – մոտ 54750000 /հիսունչորս միլիոն յոթ հարյուր հիսուն հազար/ՀՀ դրամի չափով, որը կազմում է մոտ 150000/ հարյուր հիսուն հազար/ ԱՄՆ դոլար:<br><br>2-րդ փուլ՝ հողային, երկաթ-բետոնյա և մետաղական կարկասի աշխատանքներ 9-10 ամիս տևողությամբ - մոտ 730000000/ յոթ հարյուր երեսուն միլիոն/ ՀՀ դրամի չափով, որը կազմում է մոտ 2000000 /երկու միլիոն/ ԱՄՆ դոլար:<br><br>3-րդ փուլ՝ էլեկտրա-մեխանիկական աշխատանքներ 9-10 ամիս տևողությամբ - մոտ 730000000/ յոթ հարյուր երեսուն միլիոն/ ՀՀ դրամի չափով, որը կազմում է մոտ 2000000 /երկու միլիոն/ ԱՄՆ դոլար:<br><br>4-րդ փուլ՝ արտաքին և ներքին հարդարման աշխատանքներ, 9-10 ամիս տևողությամբ - մոտ 547500000 /հինգ հարյուր քառասունյոթ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀդրամի չափով, որը կազմում է մոտ 1500000/ մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ԱՄՆ դոլար:<br><br>5.-րդ փուլ՝ շենքի շրջակա միջավայրի բարեկարգում՝ այգու հարդարում, կանաչապատում, լուսավորում և այլն, 6-8 ամիս տևողությամբ - մոտ 492750000 /չորս հարյուր իննսուներկու միլիոն յոթ հարյուր հիսուն/ ՀՀ դրամի չափով, որը կազմում է մոտ 1350000 / մեկ միլիոն երեք հարյուր հիսուն հազար/ ԱՄՆ դոլար<br>Վերը նշված փուլերի որոշակի աշխատանքներ կատարվելու են զուգահեռ, այնպես որ ամբողջ շինարարարությունը ավարտված կլինի 28 ամսվա ընթացքում: |
| 10 | Ձեռք բերվող ներմուծվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | 1. Շինարարական աշխատանքների իրականացում – մոտ 2650000/ երկու միլիոն վեց հարյուր հիսուն հազար" ԱՄՆ դոլար, որը կազմում է մոտ 967250000/ինը հարյուր վաթսունյոթ միլիոն երկու հարյուր հիսուն հազար / ՀՀ դրամ<br>2. Շինարական նյութերի , դպրոցական գույքի, անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում տեղական շուկայից – մոտ 310250000 /երեք հարյուր տաս միլիոն երկու հարյուր հիսուն հազար / ՀՀ դրամի չափով, որը կազմում է մոտ 850000 / ութ հարյուր հիսուն հազար/ ԱՄՆ դոլար<br>3. Շինարական նյութերի , դպրոցական գույքի, անհրաժեշտ սարքավորումների ներմուծում – մոտ 1277500000/ մեկ միլիարդ երկու հարյուր յոթանասունյոթ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով, որը կազմում է մոտ 3500000/ երեք միլիոն հինգ հարյուր հազար/ ԱՄՆ դոլար: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Նշված ծրագրի ընթացքում ֆինանսական միջոցները ուղղվելու են միայն շինարարական աշխատանքեր կատարելու և անհրաժեշտ շինանյութեր և սարքավորումներ ձեռք բերելու և ներմուծելու համար: Որևէ կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Համագործակցությունը նախատեսվում է<br>• ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ<br>• ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է իրականացնել ծրագրի արդյունավետության գնահատում շենքի կառուցման ղեկավարման և վերահսկման հանձնաժողովի կողմից՝ ելնելով սահմանված ամենաբարձր չափանիշներից:<br>Շենքի շահագործման օրվանից սկսած՝ սահմանված նպատակների նկատմամբ ամենօրյա հսկողություն կիրականացնի ԱՀԱԸ-ի Հոգաբարձուների խորհրդի, և վարչական ղեկավարման մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի մասին պարբերաբար հաշվետվություններ կներկայացվեն նաև ՀՀ կառավարության առընթեր Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ - 775 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի օգոստոսի 31-ի N 3/3.8-2/83888-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 1-ի N ՀՔ/22/7969-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 1-ի N ԱԱ/3-6/6191-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Միացյալ Հայկական հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բժշկական պարագաների (20 տեղ, 4705 կգ ընդհանուր քաշով, 267199.05 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 7642 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության միջոցով կբաշխվի Լեռնայի Ղարաբաղի Հանրապետության հիվանդանոցներին և բուժկետերին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ- 776 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N Մ-120-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ՖԵԴԵՐԵՅՇՆ, ԻՆԿ.» ԱՄԵՐԻԿՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ) (N 1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 2-ի N 3/3.8-1/84053-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 1-ի N ԱԱ/3-4/6210-11 և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2011 թվականի օգոստոսի 29-ի N 01/03/2592-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 28-ի «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության» ծրագրի մասին» N Մ-120-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բարսիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02230504) 2011 թվականի օգոստոսի 16-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված ապրանքների մատակարարում՝ 847837 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ- 777-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-935-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍԻ. Օ. ԷՅ. ԷՖ.» ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 2-ի N 3.8-1/84060-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 1-ի N ԱԱ/3-4/6208-11 գրությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սի. Օ. էՅ. էֆ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սի. Օ. էՅ. էֆ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-935-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԿԱՆԱԿԱ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2011 թվականի օգոստոսի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Արմավիրի մարզի Դալարիկ համայնքի մանկապարտեզին կից պուրակի բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 7500000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-778-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-Ի N Մ-411-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2011 թվականի օգոստոսի 24-ի N 1/01/11569-11 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի օգոստոսի 30-ի N 3/3.8-1/83808-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի 29-ի N ԱԱ/3-4/6077-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.02.2010 թվականին կնքված դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.02.2010 թվականին կնքված՝ դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2011 թվականի» ծրագրի մասին» N Մ-411-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Բյուրակն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02220595) 2011 թվականի օգոստոսի 10-ին կնքված՝ ապրանքների մատակարարման գնման NN ԽԱՊԱ-ԱՊՁԲ-11/20 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրերի N 2 հավելվածով



նախատեսված ապրանքների գնում՝ 996000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «LUS Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02232345) 2011 թվականի օգոստոսի 10-ին կնքված՝ ապրանքների մատակարարման գնման N ԽԱՊԱ-ԱՊՁԲ-11/21 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված ապրանքների մատակարարում՝ 796000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ – 779 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 2-ի N 3/3.8-2/84002-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 2–ի N ՀՔ/22/8016-11, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 7–ի N 1/02.3/1721-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 2-ի N 11-Մ-45 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 5-ի N ԱԱ/3-6/6262-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ատոմային էներգիայի միջազգային գործակալության հետ տեխնիկական համագործակցության ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (տեխնեցիումի գեներատոր (99Mo/99m Tc), 1 տեղ, 17 կգ ընդհանուր քաշով, 858 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 295.9 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-780Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ-228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի օգոստոսի 16-ի N ՍՔ/15-1/7390-11 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի օգոստոսի 26-ի N 3/3.8-1/83687-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի օգոստոսի 23-ի N 3/3-4/5959-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» ծրագրի մասին» N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՄԳԱ ՎՈԹԸՐ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02567873) 2011 թվականի հուլիսի 28-ին կնքված՝ N ՀՀ ԳՀ ԱՆԲԸԱՀԱՊՁԲ-2011/8 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրի և սարքավորման ձեռքբերում՝ 577218 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-781-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-90-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի օգոստոսի 26-ի N ԱՔ/15-1/7826-11 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 9-ի N 3/3.8-1/84003-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 1-ի N ԱԱ/3-46204-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի ու մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-90-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (ՀՎՀՀ՝ 02551144) և «Արխինովա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01513699) 2011 թվականի օգոստոսի 18-ին կնքված՝ N ԱԾԻԳ-ԲԸԱՀ-11/1 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների իրականացում՝ 930000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ- 782 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-910-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
**(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2011 թվականի օգոստոսի 23-ի N 1422 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի օգոստոսի 31-ի N 3/3.8-1/83894-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի 29-ի N ԱԱ/3-4/-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 14-ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Հաղարծինի վանական համալիրի վերակառուցման առաջին փուլի աշխատանքների կատարում» ծրագրի մասին» N Մ-910-Ա որոշմամբ (2009 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-874-Ա և 2011 թվականի մարտի 11-ի N Մ-155-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2011 թվականի հոկտեմբերի 30-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Վաղարշապատի քաղաքապետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ- 783 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N Մ-495-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 5) («Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության» հիմնադրամ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի օգոստոսի 26-ի N 3/3.8-1/83688-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի 23-ի N ԱԱ 3/3-4/5955-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության» հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 09104402) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի «Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության» հիմնադրամի կողմից իրականացվող «Ջերմուկ քաղաքի առողջարանային մասի արտաքին լուսավորության ցանցի վերակառուցում և արդիականացում» ծրագրի մասին» N Մ-495-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրամ համար ունի զգալի նշանակություն՝

«Էներգոցանցնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Երևան, Արմենակյան 129, ՀՎՀՀ՝ 01505563) 2011 թվականի օգոստոսի 5-ին կնքված՝ N «ՋՔՍՏՁԱՀ-ԱՇՁԲ-03» ծածկագրով պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Ջերմուկի քաղաքային համայնքի Մելիք Ադամյան, Մյասնիկյան, Բաբկեն Վարդանյան և Գործարանային փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և փարձաքննության անցկացում՝ 980 000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին և Ջերմուկի քաղաքապետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ - 784-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի N Մ-548-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2011 թվականի օգոստոսի 23-ի N 1423 գրությունը ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 1-ի N 3/3.8-1/83959-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի 30-ի N 3/3-4/6108-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 31-ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Եղիշե Մանուկյան» (նոր անվանումը «Վաչե և Թամար Մանուկյաններ») մատենադարանի կառուցում» ծրագրի մասին» N Մ-548-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մարտի 11-ի N Մ-147-Ա որոշման խմբագրությամբ) որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «1.615.427000 դրամ» բառերը փոխարինել «1.900.982.500 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «1.615.427000 դրամ» բառերը փոխարինել «1.900.982.500 դրամ» բառերով:

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՊրոֆԱլ» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Երևան, Մ. Մեծարենց 88ա, ՀՎՀՀ՝ 01831375) 2011 թվականի հուլիսի 21-ին կնքված՝ N 01Գ/011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 3 ամսվա ընթացքում «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի ապակե կոնստրուկցիաների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 24.465.005 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Վաղարշապատի քաղաքապետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ- 785 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-642-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագիր) (2)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի օգոստոսի 16-ի N ԱԲ/15-1/7396-11 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի օգոստոսի 26-ի N 3/3.8-1/83686-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի 23-ի N ԱԱ/3-4/5946-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի մասին (երկրորդ փուլ) N Մ-642-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գործ 555» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01204386) 2011 թվականի օգոստոսի 8-ին կնքված՝ N ՀՀ ԳՀ ԱՆՊԸԱՊՁԲ-2011/7-3 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բժշկական և ոչ բժշկական բնույթի կահույքի ձեռքբերում՝ 4176600 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-786-Ա**

**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի N Մ-549-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2011 թվականի օգոստոսի 24-ի N 1/01/11563-11 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 2-ի N 3/3.8-1/84057-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 1-ի N ԱԱ/3-4/6202-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի միջև 04.03.2011 թվականին կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի միջև 04.03.2011 թվականին կնքված՝ դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2011 թվականի» ծրագրի մասին» N Մ-549-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մեծ անիվ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01224192) 2011 թվականի հուլիսի 22-ին կնքված՝ N ԱՊՀ-Կ-03 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի NN 1 և 2 հավելվածներով նախատեսված ապրանքի գնում՝ 287000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ - 787 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-092-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 2-ի N 3/3.8-1/84035-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 1-ի N ԱԱ/3-4/6214-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հեռուստամարաթոն - 2011» ծրագրի մասին» N Մ-092-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՇԱՐՄ Հոլդինգ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01543148) 2011 թվականի օգոստոսի 11-ին կնքված՝ N Ծ-10/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեսահոլովակի պատրաստում՝ 19300000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Վերսուս ստուդիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00842355) 2011 թվականի օգոստոսի 10-ին կնքված՝ N Ծ-11/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սյուժեի պատրաստում՝ 6000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-**788**-Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 1-ի N 3/3.8-1/83961-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 1-ի N ԱԱ/3-4/6207-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սամվել Չիթչյան» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 25251847) 2011 թվականի օգոստոսի 15-ին կնքված՝ N 29 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նոր մասնաշենքի համար շերտավարագույրերի պատրաստում և տեղադրում՝ 546940 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-789-Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ) (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 7-ի N 3/3.8-1/84230-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 5-ի N ԱԱ/3-4/6273-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ալֆա Սիստեմ Տեքնոլոջիս» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02586876) 2011 թվականի օգոստոսի 15-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նոր մասնաշենքի համար էլեկտրատեխնիկական ապրանքների մատակարարում՝ 7023000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-790-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N Մ-361-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 7-ի N3/3.8-2/84232-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 8-ի N ՀՔ/22/8204-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 8-ի N ԱԱ//3-6/6384-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ձեռք բերված բեռը (դեղորայք, 10 արկղ, 206 կգ ընդհանուր քաշով, 37197.65 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 784.38 եվրոյին համարժեք դրամ, «Զվարթնոց» մ/տ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 14-ի «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ- 361-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-791-Ա**

# «ՕՐՐԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՕՐՐԱՆ-ԿՐԻԿՈՐՅԱՆ» ՑԵՐԵԿԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 2-ի N 3/3.8-1/84054-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի օգոստոսի 31-ի N 01/5456-11, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 5-ի N 07/07.1/5654-11, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2011 թվականի օգոստոսի 31-ի N 01/13.2/4229-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 1-ի N ԱԱ/3-4/6211-11 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 1-ի N 101/108.3.4/4571-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ   է .***

1. Բարեգործական որակել «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, առաջին Եկմալյան 6, ՀՎՀՀ՝ 02552842) Վանաձոր քաղաքում իրականացվող՝ 271652118 դրամ ընդհանուր արժեքով «Օրրան-Կրիկորյան» ցերեկային խնամքի կենտրոնի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2011 թվականի մայիսի 25-ին կնքված՝ N C1/2011 պայմանագրի N 12 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունիսի 1-ից մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում շինարարական աշխատանքների իրականացում՝ 244760800 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.



2) «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06909421) 2011 թվականի օգոստոսի 1-ին կնքված՝ N 20-11 տ/հ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում Վանաձոր քաղաքում ցերեկային խնամքի կենտրոնի շինարարության որակի տեխնիկական հսկողության աշխատանքների իրականացում՝ 1891318 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

Հաստատում եմ

Ծրագրի ղեկավար Արմենուհի Հովհաննիսյան

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
## «ՕՐՐԱՆ-Կրիկորյան» Վանաձոր քաղաքում ցերեկային խնամքի կենտրոնի կառուցման

2011թ.

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակները | Կառուցել եռահարկ , 1000 քառ.մ ընդհանուր մակերեսով ցերեկային խնամքի կենտրոն սոցիալապես անապահով երեխաների և միայնակ ծերերի համար |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելը: |
| | Բարեգործը (բարեգործները) | Գրիգորյան բարեգործական հիմնադրամ (Անգլիա)-92248800դրամ,ժողովրդական զարգացման համաշխարհային կազմակերպություն-CIPS (Իտալիա)-126500000 դրամ,ԱՄՆ-ից անհատ բարերարներ-52903306 դրամ: |
| 4 | Ծրագրի կատարողը | «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն<br>ՀՎՀՀ 02552842<br>Առաջին Եկմալյան 6<br>Երևան, Հայաստանի Հանրապետություն<br>Հեռ. 53-51-67 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնակավայրը | Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ,ք. Վանաձոր, Տ. Մեծի փող թիվ 4ա |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է՝ 271652118( երկու հարյուր յոթանասունմեկ միլիոն վեց հարյուր հիսունմերկու հազար հարյուր տասնութ) դրամ |
| 7 | Բարեգործություն ստացողը | • Վանաձոր քաղաքից 6-16 տարեկան 100 երեխա, ովքեր ապրում են սոցիալական ծայրահեղ դժվարություններ ունեցող, մուրացկանության շեմին գտնվող ընտանիքներում,կամ աշխատում են և մուրում են փողոցում, միակողմանի ծնողազուրկ են, հաշմանդամ, բաժանված կամ ազատազրկված ծնողներ ունեն և 60 թոշակառուներ՝( 60 և ավելի բարձր տարիքի կանայք ու տղամարդիկ, ովքեր անտուն են և մուրում են |



| | | |
|---|---|---|
| | | փողոցում, միայնակ են, անուսնացած են և անժառանգ, I, II, III խմբերի հաշմանդամ են ունեն ժառանգներ, սակայն լրացուցիչ աջակցության խիստ կարիք ունեն): |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը սկսվել է 2011թ. Հունիսի 1-ից և նախատեսված է ավարտվել մինչև 2012թ. Դեկտեմբերի 31-ը:<br>Համաձայն Օրրան ԲՀԿ-ի գործող կանոնադրության 7.2 կետի՝ կազմակերպության լուծարման դեպքում "Օրրան-Վանաձորի" շենքը կօգտագործվի նմանատիպ մեկ այլ կազմակերպության կողմից համանման կանոնադրական նպատակների համար, իսկ եթե դա անհնար է, կփոխանցվի պետական բյուջե ( կից ներկայացնում ենք կանոնադրության պատճեն): |
| 9 | Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր են առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | • շինարարական աշխատանքներ իրականացում "Կանակա" ԲԲԸ կողմից- 244760800 դրամ առանց ԱԱՀ |

| | | |
|---|---|---|
| 1 | Հողային աշխատանքներ | 5,311,179 |
| 2 | Հիմքեր | 6,894,356 |
| 3 | Պատեր ,ցոկոլ | 63,951,380 |
| 4 | Ծածկեր | 27,957,960 |
| 5 | Միջնորմներ | 4,068,114 |
| 6 | Հատակներ | 16,942,092 |
| 7 | Տանիք | 5,966,416 |
| 8 | Բացվածքներ | 19,137,836 |
| 9 | Աստիճաններ ներքին | 4,194,874 |
| 10 | Հարդարման աշխատանքներ | 27,603,71[illegible] |
| 11 | Այլ աշխատանքներ (անվտանգության աշխատանքների պաշպանություն և վերադիր ծախսեր) | 4,48[illegible]55 |
| | Ընդամենը, շին աշխատանքների | 18[illegible]80 |
| | Ջեռուցում, Օդափոխություն | [illegible] |
| | Շենքի ջեռուցում | 6,027,789 |

| | |
|---|---|
| Օդափոխություն | 4,585,199 |
| Ջեռուցում | 398,670 |
| Ընդամենը | 11,011,659 |
| Շենքի ջրամատակարարում և կոյուղի | |
| Ոռոգման ցանց | 166,115 |
| Ներքին կոյուղու ցանց | 2,742,075 |
| Ընդամենը, ջրամատակարարում և կոյուղի | 2,908,190 |
| Արտաքին ցանցեր | |
| Արտաքին ջրի ցանց | 1,018,062 |
| Ներքին ցանց (սառը և տաք ջուր) | 2,173,199 |
| Հեղեղատային ցանց | 759,276 |
| Արտաքին կոյուղու ցանց | 2,865,110 |
| Ընդամենը, արտաքին ցանցեր | 6,815,647 |
| էլ. լուսավորություն, էլ. սարքավորումների մոնտաժ | |
| էլ լուսավորման սարքավորումների մոնտաժ | 6,559,344 |
| էլ ուժային սարքավորումների մոնտաժ | 2,853,576 |
| Ընդամենը | 9,412,920 |
| Կաթսայատան համաշինարարական աշխատանքներ | 3,521,286 |
| Կաթսայատան ջերմամեխանիկական մաս | 1,116,848 |
| Կաթսայատան ջերմամեխանիկական մասի սարքավորումներ | 4,091,619 |
| Կաթսայատան էլ լուսավորության սարքավորումներ | 718,693 |
| Կաթսայատան էլ լուսավորման սարքավորումներ | 283,947 |
| Կաթսայատան ջերմացանց | 580,682 |
| Կաթսայատան ջրամատակարման և կոյուղու ցանցերի մոնտաժ | |



| | |
|---|---|
| Ջրամատակարարման ցանց | 280,490 |
| Կոյուղու ցանց | 399,878 |
| Ընդամենը կաթսայատան ջրամատակարարում և կոյուղի | 680,368 |
| Գազամատակարարման ցանցի մոնտաժ | 1,085,387 |
| Արտաքին գազատար | 2,131,376 |
| Օդային գիծ 0,4 ԿՎ | 161,327 |
| Տարածքի արտաքին լուսավորություն | 2,628,337 |
| Տարածքի բարեկարգում | 11,099,335 |
| Ամբողջը | 244,760,800 |

- շինհրապարակում կատարվող շինարարական տեխնիկական աշխատանքների վերահսկում՝ - արժեքը 1891318 դրամ՝ առանց ԱԱՀ - " Տեխպրոյեկտ" ՍՊԸ
- Օրրանի կողմից գնվող դուր և պատուհան,սանտեխնիկայի և կաթսայատան սարքավորումներ,ելեկտրոտեխնիկական սարքավորումներ ընհանուր արժեքով- 17000000 դրամ

| | | N | Ամսաթիվ | Պայմանագրի կամ հաշիվ ապրանքագրի համարը | Կազմակերպության կամ մատակարարի անվանումը | Նկարագրու-թյունը | ՀՀ դրամ տարեկան՝ առանց ԱԱՀ | ԱԱՀ-ի չափը՝ տարե կան | Ընդամենը՝ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | Ձեռք բերվելիք (ներմուծվող) ապրանքներ, ծառայություն-ների և աշխատանք-ների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | 1 | 25.05.11 | C1/2011 | "Կանակա"ԲԲԸ | Շինարարություն | 244760800 | 48952160 | 293712960 |
| | | 2 | 01.08.11 | 20-11տ/h | "Տեխպրոյեկտ" ՍՊԸ | տեխնիկական հսկողության աշխատանքներ 01.08.11-30.12.12 (17ամիս) | 1891318 | 378263 | 2269581 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Օրրանի կողմից գնվող դուռ և պատուհան,սանտ եխնիկայի և կաթսայատան սարքավորումներ, էլեկտրոտեխնիկա կան սարքավորումներ | 17000000 | 3400000 | 20400000 |
| | | | | | | Ընդամենը | 263652118 | 52730423 | 316382541 |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր | | | Ծրագրի համակարգող (ինժեների )աշխատավարձի ֆոնդ (17 ամիս ընթացկում) -5971318, բենզինի ծախսեր -1200000 դրամ, շին.աղբի տեղափոխում և այլ չնախատեսված ծախսեր-828682դրամ,ընդամենը-8000000 դրամ | | | | | |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների այլ կազմակերպությունների հետ | | | 1.ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով<br>2.ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>3.ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br>4.Լոռի մարզպետարան | | | | | |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | | | • եռամսյակային և տարեկան հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողով<br>• ամսեկան եւ եռամսյակային աշխատանքային ու ֆինանսական հաշվետվություններ են ներկայացվում «Օրրան» ԲՀԿ-ի տնօրենների խորհրդին<br>• ֆինանսական աուդիտն իրականացվում է «Գրանթ Թորնթոն Ամիօ» ՍՊԸ-ի կողմից | | | | | |

*Ծրագրի ղեկավար* *Արմենուհի Հովաննիսյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-792-Ա**
**քաղ. Երևան**

# ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՅՈՐԴԱՑ ՏԱՆ ՇՔԱՄՈՒՏՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 2-ի N 3/3.8-1/84022-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի օգոստոսի 31-ի N 01/5461-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի 30-ի N ԱԱ/3-4/6109-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 4.796.070 դրամ արժողությամբ «Վանաձորի Հայորդաց տան շքամուտքերի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ա. Հակոբյան» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Վանաձոր, Հալաբյան 1Ա, ՀՎՀՀ՝ 06906096) 2011 թվականի օգոստոսի 12-ին կնքված N 14Շ/011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վանաձորի Հայորդաց տան հարավային և հյուսիսային շքամուտքերի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 4.796.070 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Վաղարշապատի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ
Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«23» 08 2011 թ.

Վանաձորի Հայորդաց տան շքամուտքերի կառուցման

# ԾՐԱԳԻՐ

13/3

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Վանաձորի հայորդաց տան հարավային և հյուսիսային շքամուտքերի կառուցում ջրերի հոսքը դեպի նկուղ կանխելու համար: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ք.Վանաձոր |
| 6. | Ծրագրի բյուջեն | 4 796 070 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Վանաձորի Հայորդյաց տան երեխաները և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 9 սեպտեմբերի 2011թ. – 31 դեկտեմբեր 2011թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Վանաձորի հայորդաց տան շքամուտքերի կառուցում՝ 4 796 070 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Շինարարական աշխատանքներն իրականացվում են «Ա.Հակոբյան» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ ք.Վանաձոր, Հալաբյան 1Ա, ՀՎՀՀ 06906096)՝ պայմանագիր թիվ 14Շ/011՝ կնքված 12.08.2011թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է Վանաձորի հայորդաց տան հարավային և հյուսիսային շքամուտքերի կառուցում: Կառուցվելու է ֆելզիտե քարով: Հարավային շքամուտքը 3 կողմից կամարակապ է և ունի երկլանջ տանիք: Հյուսիսայինը՝ ծավալներով ավելի փոքր է հարավային շքամուտքից, կողային պատերը կամարներ չունեն, միայն մուտքային հատվածն է կամարակապ և ունի երկլանջ տանիք: Հարավային շքամուտքի մակերեսը կազմում է 3.5x4.5մ, բարձրությունը՝ 4մ, իսկ հյուսիսային շքամուտքի մակերեսը՝ 1.65x3.5մ, բարձրությունը՝ 4մ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ քաղաքաշինության նախարարության, Լոռու մարզի մարզպետարանի և Վանաձոր քաղաքի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

Գլխավոր ճարտարապետ՝
Արտավազդ Նազարեթյան

Ֆինանսական բաժնի տնօրեն՝
Մարինե Ղազարյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-793-Ա**
**քաղ. Երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԹԱԿԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 1-ի N 3/3.8-1/83963-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի օգոստոսի 31-ի N 01/5463-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի 30-ի N ԱԱ/3-4/6107-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 5.567.370 դրամ արժողությամբ «Հանդիսությունների հարթակի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ա. Հակոբյան» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Վանաձոր, Հալաբյան 1Ա, ՀՎՀՀ՝ 06906096) 2011 թվականի օգոստոսի 12-ին կնքված N 16Ծ/011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու հանդիսությունների հարթակի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 5.567.370 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ
Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«23» 08 2011 թ.

13/5

Հանդիսությունների հարթակի կառուցման

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու հյուսիսարևելյան մասում կառուցել հանդիսությունների հարթակ հոգևոր-մշակութային միջոցառումներ իրականացնելու համար: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ք.Վանաձոր |
| 6. | Ծրագրի բյուջեն | 5 567 370 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Վանաձորի Հայորդյաց տան երեխաները և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 9 սեպտեմբերի 2011թ. – 30 նոյեմբերի 2011թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու հանդիսությունների հարթակի կառուցում՝ 5 567 370 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:<br>Շինարարական աշխատանքներն իրականացվում են «Ա.Հակոբյան» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ ք.Վանաձոր, Հալաբյան 1Ա, ՀՎՀՀ 06906096)՝ պայմանագիր թիվ 16Շ/011՝ կնքված 12.08.2011թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեցեղու հյուսիսարևելյան մասում կառուցել հանդիսությունների հարթակ, որը սալապատվելու է բազալտե քարով: Հանդիսությունների հարթակի մակերեսը 100քմ. է: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ քաղաքաշինության նախարարության, Լոռու մարզի մարզպետարանի և Վանաձոր քաղաքի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

Գլխավոր ճարտարապետ՝
Արտավազդ Նազարեթյան

Ֆինանսական բաժնի տնօրեն՝
Մարինե Ղազարյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**9 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-794-Ա**
**քաղ. Երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՆԱՁՈՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՏՈՒՌ ԽՈՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի օգոստոսի 31-ի N 3/3.8-1/83890-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի օգոստոսի 31-ի N 01/5462-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի 30-ի N ԱԱ/3-4/6110-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 7.012.570 դրամ արժողությամբ «Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու Մատուռ Խորանի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ա. Հակոբյան» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Վանաձոր, Հալաբյան 1Ա, ՀՎՀՀ՝ 06906096) 2011 թվականի օգոստոսի 12-ին կնքված N 15Շ/011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու Մատուռ Խորանի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 7.012.570 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Վաղարշապատի քաղաքապետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ
Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«23» 08 2011 թ.

Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու Մատուռ Խորանի կառուցման

# ԾՐԱԳԻՐ

13/4

| | | |
